«ՄԵՐ ՀՈՒՅՍԸ ՍՓՅՈՒՌՔԸ ՉԷ, ՄԵՆՔ ԵՆՔ»

Posted on October 2, 2011 by Keghart



Category: Opinions

Կը Հաղորդէ, 5 Հոկտեմբեր 2011

«Հայ ժողովրդի դժբախտությունների պատճառը եղել է դեմոգրաֆիական աղետը»,- այսօր հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը: Հայերի ծագումնաբանությունն էր այսօր ՀԱԿ առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը՝ ֆորումի վերածված Ազատության հրապարակում:

Կը Հաղորդէ, 5 Հոկտեմբեր 2011

«Հայ ժողովրդի դժբախտությունների պատճառը եղել է դեմոգրաֆիական աղետը»,- այսօր հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը: Հայերի ծագումնաբանությունն էր այսօր ՀԱԿ առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը՝ ֆորումի վերածված Ազատության հրապարակում:

Նա ուշագրավ դասախոսություն կարդաց, որի ընթացքում տեղեկացրեց, որ հայ ժողովուրդն ի սկզբանե միատար էր եւ դա տեւեց այնքան ժամանակ, քանի դեռ արաբական արշավանքները չխաթարեցին այդ միատարրությունը: Այդ արշավանքների հետեւանքով, Հայաստան աշխարհում ձեւավորվեցին արաբաբնակ կղզյակներ եւ միայն Բագրատունիների վերելքով, այդ էմիրությունները կորցրին իրենց ազդեցությունը եւ Հայաստանում հաստատված արաբները սկսեցին միաձուլվել հայերի հետ: Հայաստանի դեմոգրաֆիական պատկերը կրկին խաթարվել է սելջուկների արշավանքից հետո, որի պատճառով հոծ հայություն է լքել երկիրը: Անգամ սա չի սպառնացել Հայաստանի դեմոգրաֆիական կայունությանը, եւ միայն մոնղոլների արշավանքը լուրջ վնաս է հասցրել հայ ժողովրդին: Մոնղոլները ունենալով շարժունակ բանակներ, իրենց ժողովրդին չեն տեղահանել, չեն պոկել հողից:

Հայաստանի ազգային միատարրության, ազգային կապը լրջագույնս խաթարել եւ Հայաստանը բաժան-բաժան է արել թուրք-իրանական պատերազմը:

Բայց ամենամղձավանջային շրջանը եղել է 1878-1914 թվականին, երբ Բեռլինի կոնֆերանսում գերտերությունները ստանձնեցին Հայաստանի պաշտպանության հարցը եւ Թուրքիան հասկացավ, որ կարող է կորցնել Հայաստանը ու սկսեց իրականացնել հայաթափման ծրագիր: Արտագաղթը հայ ժողովրդի մեջ սկիզբ է առել այդ տարիներին, երբ ժողովուրդը սկսեց բռնել պանդխտության ճանապարհը ու արտագնա աշխատանքներով պահել իրենց ընտանիքները: Սա մեթոդիկ քաղաքականություն է եղել, որին հաջորդել են տեղային ջարդեր եւ եզրափակվել 15 թվականի ջարդերով: 1մլն 600 հազար մարդ է եղել Հայաստանում 1916 թվականին եւ այդ տարիները դեմոգրաֆիական աղետի մեկնարկն էր, որը ավարտվեց 20 թվին, այդ տարիներին երկրում մնացել էր 729 հազար հայ:

Ժամանակակից Հայաստանում հաջորդ աղետը բերեց երկրաշարժը, որին կրկին հաջորդեց արտագաղթը։ Եվս մեկ ալիք սկիզբ առավ Արցախի պատերազմի տարիներին եւ դրանից հետո։

Ավարտելով հայաթափման պատճառների պատմական հարթությունը, Տեր-Պետրոսյանը նշեց, որ ժամանակակից իրականության մեջ այն սոցիալական եւ քաղաքական երեւույթ է, սակայն մեծագույն ողբերգություն է՝ անհատի համար, երբ նա մի աշխարհից հայտնվում է մեկ այլ աշխարհում, կտրվում է իր երկրից եւ իր լեզվով խոսող միջավայրում եւ սա հոգեբանական ծանր հարված է։ Սա ողբերգություն է մարդու համար։ Արտագաղթողների առաջին սերունդը այդ ողբերգությունը, ըստ Տեր-Պետրոսյանի, երբեք չի հաղթահարում, եթե անգամ օտարության մեջ գտնում է իր սոցիալական հիմքը եւ կարողանում է կուշտ ուտել։ Միեւնույն է, առաջին սերնդի հոգսը բնավորվելն ու հաջորդ սերնդի համար տվյալ երկրում տեղ ապահովելն է։

Երկրորդ սերունդը կոմպլեքսավորվում է օտարվածությամբ եւ փորձում է ձուլվել միջավայրին եւ միայն երրորդ սերունդն է ազատվում նախորդների բարդույթներից, բայց նրանք արդեն հայ չեն, թեպետ հայրենասիրական զգացմունքներ են ունենում։ Բայց նրանք են, որ շատ ավելի են օգտակար լինում հայրենիքին, քան նրանք, որ ամբողջ օրը կարող են երգել հայերեն եւ նարդի խաղալ։

Տեր-Պետրոսյանը նշեց, որ Սփյուռքն այսօր թեպետ հայրենասեր է, կարող է հոնգուր-հոնգուր լաց լինել Կոմիտաս լսելիս կամ հայկական քոչարին տեսնելիս, բայց սա չէ հայրենասիրությունը։ Ասաց, որ թեպետ սփյուռքը շատ կարեւոր գործոն է Հայաստանի համար, սակայն մենք պետք է մեր հույսը մեզ վրա դնենք։

Նա նշեց, որ արտագաղթում են հիմնականում ինտելեկտուալները, ուղեղները, սոցիալապես ակտիվ եւ պրոֆեսիոնալ հատվածը՝ լավագույն մասնագետները՝ բոլոր ոլորտներից, որոնք օտարության մեջ կարողանում են հաստատվել, քանի որ վստահ են իրենց ուժերի, իրենց մասնագիտական կարողությունների վրա։

Նա նշեց, որ մենք կորցրել ենք 1 միլիոն մարդ, որոնք պատահական մարդիկ չեն եւ նրանց բացակայությունը որակազրկել է ազգի նկարագիրը։

Քաղաքական հարթությունում արտագաղթը նույնպես վնասներ է հասցրել։ Շատերը զարմանում են, որ այսօր հանրահավաքների թափն այն չէ։ Տեր-Պետրոսյանը նշեց, որ դրա պատճառն նույնպես արտագաղթն է՝ վերջին տարիներին կրկին երկիրը լքել է որակյալ հասարակության մի ստվար զանգված։ Նա նշեց, որ իշխանություններին ձեռնտու է այդ արտագաղթը։ Տեր-Պետրոսյանը ասաց, որ իր կասկածն անհիմն չէ՝ հասարակության որակյալ, ինտելեկտուալ հատվածը դուրս են մղել, մնացել է գյուղացին, որը նույնպես լքում է երկիրը, քանի որ հողը մշակելու հնարավորություն չունի, իսկ ահա հողատարածքները հեկտարներով անցել է իշխանավորների ձեռքը։

«Եթե արտագաղթը կանգ չառնի, մենք վերանում ենք ուղղակի։ Կմնանք Լյուքսեմբուրգի

պես մի կղզյակ, շրջապատված Թուրքիայով, Իրանով, Ադրբեջանով, որոնց ազգաբնակչությունը գնալով ավելանում է»,-հայտարարեց Տեր-Պետրոսյանը: Նա իրավիճակը բնորոշեց որպես ցեղասպանություն: